ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<12>> հուլիսի 2024թ. N ՄՈ/322-Ա

ք. Արմավիր

«ԱՅԳԵՇԱՏԻ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԷԴԳԱՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Էդգար Սարգսյանի 2024 թվականի հուլիսի 10-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էդգար Սարգսյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2024 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 12-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:
2. Էդգար Սարգսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Կարինե Տեր-Հարությունյանին:

3. «Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Կարինե Տեր-Հարությունյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 12-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Էդգար Սարգսյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 13-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-08-12 09:29:52 GMT+4
Հավանություն է ԷԿԵԼՍ-ի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**